Զատագովության համառոտագիր

Բնապահպանական կառավարում

Սույն համառոտագիրը կազմված է համապարփակ մշտադիտարկման զեկույցի հիման վրա և ներկայացնում է ՀԸԳՀ-ի՝ շրջակա միջավայրի կառավարմանը վերաբերող բաժնում ամրագրված դրույթների իրականացման մակարդակը: Մշտադիտարկվել են 46(1)(ա) հոդվածը 50-րդ հոդվածի հետ համատեղ, ինչպես նաև 48(ա)(i-v) հոդվածը՝ հիմնվելով ՀԸԳՀ-ի III հավելվածում նշված ԵՄ կիրառելի հրահանգների վրա: Մշտադիտարկման մեթոդաբանությունը հիմնված է տարբեր գործիքների վրա՝ ներառյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը, պաշտոնական հաշվետվություններից և հայտարարություններից ՀԸԳՀ-ի կիրարկման վերաբերյալ տվյալների հավաքագրումը, օրենսդրության և վերաբերելի ազգային ռազմավարությունների ուսումնասիրությունը, բնապահպանական կառավարման տարբեր հարցերի վերաբերյալ վարչական դատարանի որոշումների քննությունը, ՔՀԿ-ների, համայնքի անդամների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչների հետ ֆոկուս-խմբային քննարկումները, համապատասխան վարչական մարմինների հետ հարցազրույցները:

Մենք մշակել ենք հետևյալ առաջարկությունները, որոնք նպատակ ունեն մոտարկել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ազգային օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգը և հարակից հարցերը ԵՄ վերաբերելի հրահանգներին.

- Կառավարությունը պետք է ստեղծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր մարմին և ընդունի դրա կանոնադրությունը՝ այդ մարմնին շնորհելով համապարփակ լիազորություններ՝ իրականացնելու շրջակա միջավայրի վրա ազդեցության պատշաճ գնահատում (ՇՄԱԳ) և Ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) ՇՄԱԳ օրենքով սահմանված բոլոր ոլորտներում՝ ներառյալ հանրային առողջությունը, մշակութային ժառանգությունը, աղետների կառավարումը և այլն:
- Կառավարությունը պետք է մշակի ՇՄԱԳ և ՌԷԳ ուսումնասիրության՝ պարտադիր իրավական ուժ ունեցող մեթոդաբանություն՝ հիմնված ա) Գործողության շրջանակի վերաբերյալ ԵՄ ուղեցույցի, բ) Նախնական գնահատման վերաբերյալ ԵՄ ուղեցույցի, գ) ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ԵՄ ուղեցույցի և դ) Կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության ինտեգրման մասին ԵՄ ուղեցույցի վրա:

- Կառավարությունը պետք է սահմանի այն մարմինների հստակ ցանկը, որոնք պետք է մասնակցեն ՇՄԱԳ/ՌԷԳ գործընթացին՝ բնապահպանական ոլորտում իրենց պարտականությունների, իրավասությունների և պատասխանատվության բերումով, և որոշիչ եզրակացություն/կարծիք տրամադրեն:
- Կառավարությունը պետք է նշանակի իրավասու մարմիններ՝ ՇՄԱԳ-ի մասին օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված ռազմավարական ոլորտներում ՌԷԳ իրականացնելու համար:

Հեղինակ՝ Արթուր Գրիգորյան | art.grigorian@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Արթուր Գրիգորյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: